

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔ

Սաղմոսականներ կը գտնուի Արաղածոտն գաւառին մէջ, Քասաղ գետին եզերքը: Այդ անունը ստացած է միաբաններուն անդադար սաղմոսներգութեամբ պարապելուն համար:

Սաղմոսականքի Առաջնորդներէն յիշուած են հետեւեալները:

1.— Յովհաննէս, մականուն Մուկ, 1195.— Յիշատակարանք Ձեռագրաց, էջ 591:

2.— Գրիգոր Վրդ. Ականատես, շ. 1215.— Թաղուած է նոյն վանքին մէջ եւ տապանը դարձած է ուխտատեղի: Իր շրջանին Վաչէ իշխանաց իշխան եւ ամուսինը Մամախանութուն շինած են Ս. Սիոն եկեղեցին.— Սիմէոն կաթողիկոս, Ջամբու, 1873, էջ 289: Ալիշան, Այրարատ, էջ 162, 163:

Ձորս տառեակ տարիներ ետքը Վաչէի որդին Քուրդ իշխան եւ իր ամուսինը Խորիշահ կը շինեն մատուռ մը հանդերձ գրատունով.— Այրարատ, էջ 163: էջմիածին, 1961, Յունիս էջ 44:

3.— Տիրատուր Վերակացու?, 1278ին կը ստանայ մէկ ժողովածոյ, օրինակուած Մկրտիչ Քահանայի կողմէ Կարփի գիւղաքաղաքին մէջ.— Յիշտ. Ձեռ. Թ. 49:

4.— Յակոբ Վարդապետ, 1409-1421.— Այրարատ, էջ 163:

5.— Կիրակոս քաջ Հոստոք, 1496.— Հ. Աճառեան, Յուլիսի Ձեռ. Թաւրիդի, էջ 22:

6.— Սարգիս Յպիսկապոս, 1599?-1606?.— Հետազգային դարձած է Հրմուզդի Սիւնեաց Մեծ Անպատին (1608) եւ անդ վախճանած (1620).— Գր. Դարբանդգի, Ժամանակագրութիւն, էջ 323, 448: Առ. Դաւրի-ժեցի, Գլուխ ԻԱ:

7.— Մանուէլ Արքեպիսկոպոս, 1632.— Ջամբու, էջ 289:

8.— Յովհաննէս Յպիսկոպոս, 1655-+ 1657.— Վանքը կը նորոգէ եւ կարգ ու կանոն կը հաստատէ, կը հաւաքուին քառասունէ աւելի միաբաններ.— Այրարատ, էջ 164:

9.— Ոսկան Վարդապետ, 1661.— Ջամբու, էջ 289: Այրարատ, էջ 164: Արբահամեան, Կալվածագրեր, Երեւան, 1941, էջ 20:

10.— Գաբրիէլ Վարդապետ, 1669ին կը նորոգէ Ս. Աստուածածնի մատուռը.— Այրարատ, էջ 163, 164:

11.— Յովսէսի (Յովսէփի) Վարդապետ 1707-1721.— Այրարատ, էջ 164: Յովսէփեան, Հաւուց Թառ, էջ 33:

12.— Աւետիք Վարդապետ, 1736-42.— Ջամբու, էջ 290: Այրարատ, էջ 164: Կալվածագրեր, էջ 64:

Սաղմոսականքի գրչի մշակներէն ունինք սակաւաթիւ անուններ միայն, այսպէս,

Ա.— Գեորգ Սկիւռացի, 1267ին ժամանակ մը կեցած է Սաղմոսականք, եւ հոն աւարտած է Տօմապատմութիւն մը առաջին հատորին ընդօրինակութիւնը.— Այրարատ, 163:

Բ.— Աստուածատուր Կրօնաւոր, 1320ին օրինակած է մէկ Աւետարան.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշտ. ԺԴ. Դարի, Թ. 203:

Գ.— Մկրտիչ Յզէգեցի, Գրիչ, 1413ին օրինակած է մէկ Լուծմունց Գր. Աստուածաբանի Առ Որս Գրքին, եւ իբր յիշատակնութեամբ է իր հոգեւոր եղբոր Թովմա Մեծոփեցի Վարդապետին.— Լ. Ս. Խաչիկեան, Յիշտ. ԺԵ. Դարի, Մասն Ա., Թ. 148:

Դ.— Կարապետ Կուսակոթմ Բաշմանյ, Գրիչ, աշակերտ եւ հոգեւոր որդի տէր Աստուածատուր վարդապետի. 1436ին օրինակած է մէկ Մաշտոց.— Յիշտ. ԺԵ. Դարի, Մասն Ա., Թ. 509:

Ե.— Յովհաննէս Արեգայ, Գրիչ, 1496ին ուսարտած է օրինակութիւնը Աւետարանի մը, Սպահանի խնդրանքով.— Հ. Աճառեան, Յուլիսի Ձեռ. Թաւրիդի, էջ 22: